


Մ Ի Օ Ն

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՉԳԸՅԻՆ, ԲԸՆԸՍԻՐԸԿԸՆ, ԳՐԸԳԻՏԸԿԸՆ  
ԵՒ ՔԸՂԸՔԸԿԸՆ

ԵՐՐՈՐԻ ՏԱՐԻ  
ՇՐՋԸՆ ՍԻԸՍԵԸՅ




ՅԵՐՈՒՍԸՂԻՄ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1868





ԵՐԱՐԻՒՄ ՏԱՐԻ  
ԹԻՒ 6.

Մ Մ Մ Ա Գ Ի Ր

ՅՈՒՆԻՍ 30.  
1868.

ԱՅԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԷԶՄԻԱԾԻՆ ԵՒ ԱՐԱՐԱՏ

ԵՐԱ Խորայելի որդիքը իրենց հայրենի երկրէն տարագրուած Բաբելոնացիքն եւ Պարսկաստանի գերութեան մէջ կը տառապէին, հայրենեաց սէրը կը րոտիպէր որ ամեն եկաւորներէն եւ անցաւորներէն հարցնեն՝ Թէ ի՞նչ վիճակի մէջ է արդեօք Երուսաղէմը, չէ՞ն արդեօք, Թէ անշէն եւ աւերակ։ Եւ հայրենասիրական անձուկն է, զոր կը յիշեցնէ մեզ Սաղմոսի յետապաշտապը. « Հարցէք զողոունէ Երուսաղէմի եւ գլխութենէ նորա, ոյք սիրէք զնա ։ Եւ սրտաշարժ սասացուածը գոգցես ամեն տարագրուածներու եւ պանդուխտներու սրտի խորոց ձայնն է. վրան զի ինչ որ էր նախնի Երուսաղէմը

մը Խորայելի զաւակաց համար, նոյն է իւրաքանչիւր մարդոյ համար իւր բնիկ հայրենիքը. նոյն է հետեւապէս եւ Հայու համար իւր Հայաստանը—իւր Երմիածինը, Երարատը, այլովքն հանդերձ, Եւբրէն եւ հայրենազգեցիկ անձուկ մի կը ստիպէ հեռաւոր օտարութեան մէջ պանդխտող իւրաքանչիւր Հայ զաւակ՝ լռելեայն իւր սրտի խորոց մէջ, եւ կամ բանաւոր ձայնաւ կը թեմար հարցնել՝ Թէ ի՞նչ վիճակի մէջ է Հայ հայրենեաց մեծամեծ յիշատակարանաց միջնափայրը — Երմիածին ։ Ի՞նչ խորհուրդներ եւ ի՞նչ ձեռնարկութիւններ կը յղանան հայրապետական խորհրդանոցի մէջ, եւ ի՞նչ գոր-

ձեր կը գործունէին ՝ Դ պայծառութիւն  
Էկեղեցւոյ և ՚ի շինութիւն Լճիկն ,  
Լյո հարցատիրութիւնը շատ բնական  
է , վստն դի ուր որ մարդու գանձն է ,  
իւր սիրտը եւս այն տեղ է : Հայու  
ժառանգական գանձը իւր հայրենեայ  
մէջ է , անդ է ուրեմն և իւր սիրտը :  
Լյո գանձն է իւր նախնեայ յիշատա-  
կարանքը ( շէն Թէ անշէն ) , իւր հօրե-  
նական աւանդները , իւր նախնի Թա-  
գաւորական հարստութեան մնացորդ-  
ները , իւր հայրապետութիւնը , իւր  
հնութիւնքը եւ ներկայի ակնկալու-  
թիւնքը : Լնցած են երկար գարեր ,  
անցած եւ յաջորդած են քանի մի սե-  
րունդներ , յորմէ հետէ Հայաստանի  
գաւազներէն շատերը կը բնակին հե-  
ռաւոր օրաբութեան մէջ , սակայն ի-  
րենց սիրտը հայրենեայ մէջ է և այ-  
սօր իսկ երբ այցելութեան կ'եղանեն  
իրենց բնիկ և նախնական երկրին , կը  
յուզին և կ'այլալին անպատուժ ըզ-  
գացմունքներով : Երբ կը տեսնեն հինա-  
ւուրց Սասիւր , բաղնադարեան Լջ  
միածինը , Լրարտեան բնագաւառի  
բիւրաւոր կիսաւեր յիշատակարանը ,  
իրենց սիրտը կը Թռտայ , աչքերը  
կը պղտորին և արտասուայ կաթիլները  
կը Թորին ծնօսներէն : Լյոյսէս իւրա-  
քանչիւր հայրենի մնացորդներ , Սա-  
սիսի երկնաբերձ կոթողէն սկսեալ մին  
չեւ Սեւրապի անշուք եւ տափարակ  
գերեզմանաբարը , վերին օդէն սկսեալ  
մինչեւ ներքին ոտնակոխ փոշին , մի  
առանձին սիրապետութի ունին հայու  
սրտի վրայ : Եւ այնչափ զգալի է այս  
սիրապետութիւնը : որ օտար ճանա-  
պարհորդներն անգամ կըզգածին , յո-  
րոց մէկը այս խօսքերով կը բացատրէր  
իւր սրտի տպաւորութիւնը , « Երբ  
Լրարտեան երկիրը կը գիտեմ , հետոյ  
մի կը նմարեմ , որ աստուածային հո-  
գւոյ ջրմուտքութեան հետքն է , կեն-

գանի շունչ մի կը զգամ , որ երբեմն  
այս երկիրը գրաւող բարեմասնիկ մարդ-  
կութեան խորհրդաւոր շունչն է Դ :

Սոյն օրինակ տպաւորութիւնները  
այնքան աւելի սրտի գորանան Թէ հա-  
յու և Թէ հայասէր օտարի սրտին մէջ ,  
որքան յառաջդիմութեամբ վերակեն-  
դանանայ նոյն երկիրը . և մեր աստծին  
մի յայտնի ապացոյց է , որ Լջմիածնի  
Լրարա անուն օրագրի հրատարակու-  
թեան ձեռնարկութիւնը այսօր դրա-  
ւած է ամեն մտախոհ և զգայուն հո-  
յու մտադրութիւնը : Հայը մեծ բա-  
րեաց ակնկալութիւն ունի Լջմիածնի  
հայրապետական Լթոռէն , և այն աչ-  
քով չլիսի նայի Լրարա օրագրի վե-  
րայ , ինչ աչքով որ կընայի միւս ազ-  
գային պարբերականներու վրայ : Հայը  
կըստատէ տեսնել իւր սրտի , իւր բազ-  
մանայ և ակնկալութեանց բղկուածքը  
նոյն հայրապետական Լթոռոյ և իւր  
օրագրի մէջ : Հետեւապէս որչափ մեծ  
է հայու ակնկալութիւնը , այնչափ ընդ-  
արձակ է և հայրապետական Լթոռոյ  
գործողութեան շրջանը : Լյն Լթո-  
ռը , որոյ նախկին հայրապետը Հայաս-  
տանեայց լուսաւորութեան հիմը դը-  
նելով՝ պսակուէր է Լրարաի գեղե-  
ցիկ նշանաբանով , այն Լթոռը այսօր  
եւս հայ սերունդի լուսաւորութեան  
պարտքն ունի ժողովրդեան ոգեւորիչ  
խրախուսանքներով , դպրոցներով , մա-  
մուրով եւ ոգեպարար հրատարակու-  
թիւններով :

Լրարա ( ) օրագրի հրատարակութիւնը  
մասնաւոր գրաւական մի համարելով  
այս գործողութեանը Լճը կը վաճա-  
քի տեսնել ուրիշ նորանոր ազգաշէն  
ձեռնարկութիւններ , մասնաւոր ազ-  
գային նոր սերունդի դաստիարակու-  
թեան և ընտիր եկեղեցականաց պատ-  
րաստութեան նկատմամբ : Լճը կը  
փափարի նոյն իսկ Լրարա օրագիրը աչ-

էիք ընդարձակ պարունակութեամբ տեսնել, ուր ոչ միայն ղետեղին Յայտաբարութեան մէջ նշանակուած յօդուածները, այլ և վիճակագրական տեղեկութիւնք, հայրենեաց ստորագրութեան հետ և պատկերներ նշանաւոր տեղեաց, փանօրէից, շինից և աւերակաց, նմանապէս ժամանակագրական հրատարակութիւնք Հայրապետական գործառնութեանց եւ եկեղեցական դատու տեսչութեան և կառութեան մասին : Ս'ենք յաւտով ենք, որ Բագը ոչ միայն սիրով կը նպաստէ և բարոյապէս ու նիւթապէս կը գործակցի Հայրապետական Լթոռոյ ազդաշէն ձեռնարկութեանցը, այլ և Լրարար օրագրի խմբագրութեան յոժը զօրացը նելու և ջըջանը ընդարձակելու համար՝ կը գտնուին Քանապէտ անձինք, որոնք յանձն կ'առնուն ուրախութիւն մասնակցիլ, եթէ այդպիսի բանասիրաց կարօտութիւն զգայ սուրբ Լթոռը : Կարճ ասելով, Բագը կը համարէ Լժպիածնի հայրապետական Լթոռը իբրեւ ազգային լուծեան ներկայացուցիչը եւ իբրեւ հայութեան պատկերը, ուրեմն՝ և որչափ գեղեցիկ և անթերի լինի այս պատկերը իւր ամենակերպ յատկութեամբ, այնչափ փառք է վեհափառ Լթոռիկոսին, պարծանք հայրապետական Լթոռին եւ միխթարութիւն լուծեան Բագին ։

Այս քաղցր դիպումներով կը  
շնորհաւորեմք ահա՛ Աբարա օրագրի  
հրատարակութիւնը և ամենայն յա-  
ջողութիւն և յառաջդիմութիւն  
մաղթելով՝ կը զեանդենք Սէնթ մէջ  
վեհափառ Աթոռակոյսի կոնգալը և  
նոր օրագրի յայտարարութիւնը ի գի-  
տութիւն ազգայնոց ։

Գեորգ Ժառաջ Վրթեմուրի 1 . . . Լուսաւոր-  
լահան Հայոց Անհագի սրբոյ Էջմիածնի ծանուցա-  
ւեմք :

Հայրապետական ծանր պաշտոնն, զոր վերին Վաթախնամուծիւնն անբինեալ յոնձն արար մեզ, յամենայն շրջանս հոգեւոր տեսչութեան՝ մեքում քուռն հարեալ զաղօթքուս լուսաւորութենէ, որ միտէ սպեղանին քյառալադիմութեան Վրդիոյ յատարարիպէ երջանկութեան և բարոյական լուսաւորութեան, աներկմիտ քաջութեւն զմեզ դուռ գործել քստ մերովսանն կարողութեան յառաջ վարել զամենայն մտադրեալ գործք մեր ի ցանկալի Վրդիոյ սիրելւոյ, յորոց մին եւթմէն իսկ հրատարակել զարժանաւոր լրագիր ։ Այս աղաքաւ առաջադրեմք Անօգի արքայ Վրդիանի առանց յապաղանաց առնել զպատշաճ ճաւոր կարգադրութիւն — պատրաստ տեւ զամենայն պակասեալ պարագայս տպարանի Վթուոյս, որոյ տաղադրութեան հարկաւորելի տառքն ընդ մեզ բերեալ եմք, կարգել վերատեսուչ և միանգամայն տնօրէն զՎեր Վրդեպիկապոսն Վրէլ և օգնական նորին զերկուս ուսման տեղեակ արժանաւոր՝ վարդապետս, և տալ տպագրել զխտամետոյ լրագիր մի թանկարան Վրդապետն տնուամբ և օր ըստ օրէ անքուն հսկողութեամբ ջան ի գործ դրնել, զի ամենայն առարկայք վերաբերեալք ազգային կրօնական և բարոյական յառաջադիմութեանց, յառաջ տարցին համապատշաճ մերումեզ կարգադրութեան, և յետ աւարտմանն յայտնել մեզ զմերձաւորագոյն կարգադրութենէ Անօգի ք Ե Ե Ե մարտի 1868 ամի . Ն . 28 . ի սուրբ Վրդիանի

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

## ԱՐԱՐԱՏ ԱԹՍԱԳԻՐ

Կրօնական, պատմական, բանասիրական և բարոյական աշխատություններ միասինք սուրբ Էջմիածնի:

Կրօնականին մէջ կը գրուին մեր եկեղեցական կարգաց և արարողութեանց վրայ տեղեկութիւններ. Կաթողիկոսաց գործեր. սուրբ Հարց գրուածներ, ազգային մատենագրաց կենսագրութիւններ, և ձեռագիր մատենից ծանօթութիւններ:

Պատմականին մէջ Հայաստանի նահանգաց, դաւառաց և քաղաքաց աշխարհագրական դիտելիք. վանօրէից և մենաստանաց ստորագրութիւններ. արձանագրութիւններ, որոց նշխարքներն են որ թերութեամբ ժամանակ ժամանակ հրատարակուած են օրագրաց և ամսագրութիւնց մէջ:

Բանասիրականը պիտի լինի Ազգիս վիճակին վրայ տեղեկութիւններ, ազգային դատասիրականութեան վերաբերեալ յօդուածներ, նամականիք, նախնեաց ճառեր, ճ նապարհորդութիւններ, ոտանաւորներ, թարգմանութիւններ և այլն, իսկ:

Բարոյականը՝ Սուրբ Գրոց վճռական առաւանդութեան ընդլայնումներ, ազգային յիշատակարանք, առակք, հանելուկք, ընդ որս և օրագրալուրք և այլ աչսպիսիք:

Բարարար տպագրուելու է ի սուր պարանի Աթոռոյս սուրբ Էջմիածնի նախաձեռնութեամբ և ընտիր տառերով և գեղեցիկ թղթով, առ այժմ ամօղ յամիս ութամալ թերթով յայտարարութեանս հրատարակուելէն երկու և միս ետքը:

Բարարար գրուելու է պարզ աշխարհաբար Հայաստանի Երեւանաց գաւառական լեզուով: Ազգիս եկե-

ղեցական կղերը առհասարակ ի հարկէ Բնագրիս բաժանորդագրելու գրութէ կրօնական նշանակուած է նորագինը երեք մանկթ, որք միայն տպագրութեան ծախքը հանելու համար որոշուած են և ոչ վաստակի ակնկալութեամբ:

Բաժանորդ գրուելու ցանկացող Ազգայինը կը հրաւիրուին իրենց ըստ ստորագրութիւնը յանձնել վիճակաւոր Գեր. Բաղնիսրդաց և նոցա փոխաւորդացը, կանխիկ վճարելով Բաւարասայ տարեկան արժէքը, որք անգամք են միանգամայն և գործակալք Բնագրիս:

Ս. Էջմիածնի. 1868. Սարգ:

## ՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՅԹԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ուսումնարաններէ և իւր ինքնին նշով լինել ի գրիստոսէ վասն եղբայր ինչ և ազգականաց բոտ մարմնաց: Գործ. հարգ. թ. 3:

Հայրենիք և հայրենասիրութիւն, Ազգ և ազգասիրութիւն՝ շատ ուրախ կան բառեր դարձած են մեր խորհրդածութեանց, խօսակցութեանց և գրուածոց մէջ: Եթէ բանաս այս վերջին քանի մի տարուան ազգային յիշատակարանները, ճառագրութիւնները, դրոյսները, թատերական հաստուածները, նամականին և մինչեւ անգամ աշակերտաց դպրոցական շաբադարձները, ամեն տեղ հայրենասիրութիւն կը կարգաս, ամենու մէջ ազգասիրութիւն կը լսեն (1): Այս մի դար

(1) Եւսկիս Հայրենասիրութեան և Ազգասիրութեան բառերու կարմու թեանը նայելով մեկը կը նշանակէ սեր առ հայրենի երկիրն և միւսն սեր առ Ազգն: Բայց որովհետեւ երկուսն ևս անխառնար իրարու տեղ

ի, և չմի ժամանակ այնչափ չեն կրկնը  
ուեր հայրենասիրութիւն և ազգա-  
սիրութիւն բառերը, ինչպէս ներ-  
կայ գարուս մէջ, և ոչ մի դար այն-  
պէս ցուակցութեան և սիրոյ կա-  
րօտ չէ եղած մեր Ղզը, ինչպէս ներ-  
կայիս մէջ, խօսքը իրականութեան  
տեղ է բռներ, և ազգասիրութեան վե-  
րայ խօսիլը՝ բուն ազգասիրութեան  
տեղ: Իսկ ազգասիրութիւնը իւր  
առանձին գծագիրն ունի և յատկա-  
նիք, իւր առանձին լեզուն և յա-  
տուէկ նշանաբանը, իւր կատարումն և  
իւր արդիւնքը: Հազարաւոր աղաղակ-  
ներու մէջ հայրենասիրութեան բարբառն  
յայտնի է, և բխրաւոր գոջներու մէջ՝  
նորա խորհրդանշանը ակներեւ: Նորա  
լեզուն՝ Արփատուն է և նորա պոսկը՝  
Երկիր, արտաքուք ազգակցաց համար  
նշուիք եղբարց համար: Այս լեզունով  
խօսեր են բոլոր հայրենասէրները, այս  
պոսկով պատկուեր են ամեն ճշմարիտ  
ազգասէրները: Այս է նոցա ուխտը.  
« Եւրասիա ինդոսի նշով լինել ի  
Վրիստոսէ վասն եղբարց իմաց և ազ-  
գականաց ըստ մարմնոյ »: Այս թող լի-  
նի և մեր համար ուխտ և նշանաբան:

Հայրենասիրութեան զգացմունքը  
ամեն տեղ և ամեն ժամանակ բնական  
և նուիրական զգացմունք է բարոյ-  
ուած. և նորա զոհը՝ Կոտուծոյ և մարդ-  
կան հաճելի զոհ, Դատ մարդիկ  
այս սիրով վառուած՝ իրենց անձը զո-  
հած են, և դարերը վկայած են որ  
հայրենասիրութիւնը ցնորք չէ և ոչ

գործ գրուած են և շատ անգամ միայն եպիստո-  
լոսիւն բարով հատկացուած է և ազգասիրութեան բա-  
ռի իմաստը, ուստի մենք ևս մեր գրութեան մէջ ի-  
րարմէ չը դատեցնիր, այլ շատ տեղ երկուսն ևս հա-  
մանան իմաստով գործ գրինք: Մեր ազգային ա-  
կիզմանի գրիչներն մէկը — Եղիշէ վարդապետը  
— հայրենասիրութիւն և ազգասիրութիւն բառե-  
րու տեղ գործ գրած ունի: Սուրբ Եսայի՝ ըստ ո-  
րոս ազգ և հայրենիք սուրբ են հայրենասիր գրա-  
հածքը:

երեւակայութեան ճնունդ: այլ ցոյ-  
մունք և ճառագայթ է այն նուիրական  
վառարանին, ուր Վրիստոսի սիրութիւնը  
ամփոփած է մարդկային բոլոր բարի  
զգացմունքները: Այն տեղ, ուր է սէր  
գերդաստանի և սէր մարդկութեան,  
այն տեղ է նայնպէս և սէր Ղզի: Ղզա-  
սիրութիւնը զի դմունք է ընտանեկան  
սիրոյն և մարդասիրութիւնն՝ զեղմունք  
ազգասիրութեան: Այս երեքն եւս ի-  
րարմէ աղբերացած են և իրարու վը-  
րայ ամրացած: Եւնէ կանոնաւոր եւ-  
զգայուն սրտերու մէջ սիրոյ ճառա-  
գայթները կանոնաւոր կերպով ցոյ-  
ցած են թէ՛ Վերդաստանի, թէ՛ Ղզի  
և թէ՛ Վարդկութեան վրայ: Իսկ  
Կոտուած, որ մեր սիրտը և կարողու-  
թիւնը գիտէ, այնպէս ոտեղծած է  
զմեղ, որ ամեն բանի մէջ փորքէն դէպ-  
ի մեծը գիտնէ, մեր որդիքը սիրելով ու-  
տանիք սիրել մեր ազգակիցները, և ազ-  
գակիցները սիրելով՝ սիրենք զմարդիկ:  
Մեր ընտանիքը զարգայնենք մեր հայ-  
րենեաց համար և մեր հայրենիքը հա-  
նուր մարդկուն համար: յիշէ կր փափա-  
քիք բարիք անեն զմարդկուն մեր տա-  
ղանդով, հանձարով և ստացուածքով:  
մատակարարութիւնը մեր հայրենիքէն  
եւ ազգէն սկսինք: վասն զի առանց  
ընտանեկան սիրոյ՝ հայրենասիրութիւն  
չլիւ, եւ ոչ առանց հայրենասիրու-  
թեան՝ մարդասիրութիւն, վասն զի  
ճշմարիտ զարոյց մարդասիրութեան՝  
հայրենասիրութիւնն է, և զարոյց հայ-  
րենասիրութեան՝ ոգին ընտանեաց:  
Եւրեմի, ընտանեկան երջանկութեան  
համար ազգ կործանել, և կամ ազգա-  
յին երջանկութեան համար՝ օտար  
ազգեր ոտնակոխ առնել, հրեշտակ  
սկզբունք է այս, արտաքոյ բնական և  
աստուածային օրինաց: Վրիստոս ևս մար-  
դասէր ձեւանալով՝ ազգութիւն ար-  
համարհել, և ազգասիրութեան էութե-  
ան

Թիւնն ուրանալ՝ կրնանակէ ընտանիքը ջնջել, որ մեր որորանն ու գերեզմանն է եւ միանգամայն հայրենատիրութեան խանձարուրը :

Այսպէս ահա, հայրենասիրութիւն, որ ծնունդ է ընտանեկան սիրոյն եւ ճնող հանուր մարդասիրութեան, շարժառիթն է և մեր սրտի խորոց յազման և առարկայ ներկայ գրութեան : Բայց յառաջ քան բացատրելն թէ ինչ է հայրենասիրութիւն և ուխտ հայրենասիրին, տեսնենք ամենէն առաջ թէ ինչ է Հայրենիք և ինչ է Ազգ :

Հայրենիքն է մեր որորանը և գերեզմանը, հայրենակիցներն են մեր մարմինը եւ արիւնը : Հայրենիքն է այն հասարակաց մայրը, որոյ ծոյցին մէջ աւանդները կը ծնանին եւ կը զարգանան : Իսկ Ազգն է այն հասարակաց միութիւնը, ուր իրարու հետ կը միանան անհատները, օգուտները և շահերը, և ամեն կեանքերէ կը կազմուի ընդհանուր կեանք : որ չլուծանիր անհատներու հետ, այլ կը յարատեւէ անընդհատ : Այս ընդհանուր և յարատեւ կեանքն է միայն, որ կարող է անսպառելի բարութեանց աղբիւր լինել, յառաջող իմութեան սկզբունք, զարգացման ոյժ ու պահպանութիւն և ազգային մարմնոց ապահովութիւնն ու երջանկութիւնն :

Այս է հայրենեաց և ազգի համառօտ գծապիւրը, մոքի տուած բացատրութեանը նայելով : Բայց միթէ հայրենասէր սրտի համար ազգ և հայրենիք մեկնութիւն ունին և ռահման : — ոչ բնաւ : Ա՛նք գիտենք որ հայրենիքէն ընդարձակ ծովերով և ջամաքով բաժանուած հայրենասիրի համար, կարծես թէ, կենդանութեան կազդուրիչ տարերքը փոփոխուած են, ոչ նորա լեզուն նոյն լեզուն է, ոչ փառք՝ նայն փառք, և ոչ սիրտը՝ նոյն

սիրտը : Ա՛նք գիտենք որ մինք կրտիւրենք հայրենիքը, ինչպէս մեր կեանքը, և կրտիւրենք ճատ բնականորէն, ինչպէս կը շնչենք օդը : Ա՛նք գիտենք որ ազգի վիշտը մեզ կը վշտացնէ և բարեբաւ տուածիւնը մեզ կ'ուրախացնէ : Ա՛նք գիտենք որ հայրենասէրները ուրախութեամբ կը մեռանին Հայրենեաց և Ազգի համար : Բայց հայրենեաց գեղեցկութիւնն է արդեօք և ազգի երջանկութիւնը, զոր մենք կը սիրենք : — ոչ ամենեւին : Այսն զի որքան ամառնի է հայրենիքը և հայրենակցաց վիշտակը թշուառ, այնքան աւելի զգալի են հայրենասէր սրտին և այնքան աւելի սիրելի : Աւրեմն բուն իսկ հայրենիքն ու ազգն են, որ կը գրաւեն մեր սիրտը, և ոչ թէ նոցա շքեղութիւնը և վայելչութիւնը : Բայց թէ ինչու կրտիւրենք հայրենիքը, և ինչու սիրով կը մեռանիմք ազգի համար : — Հայրենասէր սրտերու մէջ պէտք է որոնել այս հարցման պատասխանը, վասն զի միտքը պատասխան չունի այս մասին : Ինչու (Յակոբ և Յովսէփ Նահապետները մահուան ժամանակ կ'երգուեցնեն իրենց որդիքը՝ օտար հողէ հանել իրենց ոտիկերը և տանել թաղել հայրենեաց մէջ, իրենց հարց հետ : Ինչու ասու ուսածախսոն Սովետս կենաց դպրութենէն ջնջուիլ կը խնդրէ իր ազգի համար, և ինչու Պօղոս կը փափաքի և կ'ուխտէ նզով լինիլ ի Բերսաուսէ վաւրն եղբարց և աղբականոց : Ի՞նչ միտք և ի՞նչ հանձար կայող է մեկնել և համոզել մեզ, բայց հայրենասէր սիրտը կը խանդաղատի և կը զգայ, որ արդարեւ հայրենիքը քույր է նաեւ ոսկերաց համար և այնչափ մեծ է ազգն, որ մարդ ուրախութեամբ կը փափաքի նզով լինիլ նորա վառաց, բարօրութեան և կատարելութեան համար, Աւրեմն, այն սէրը, որ կը վառի մարդ

դո՞ւնքնորի մէջ իւր հայրենեաց և աղ-  
գի համար, այն սէրը բնական սէր է.  
բայց ի հարկէ դատարարական թիւնը և  
կրթութիւնը մեծ ազդեցութիւն ու-  
նին նոյն սիրոյ զարգացման և անձեռա-  
թեան համար: Այն մարդու սրտի  
մէջ բնականօրէն մի ձգտումն կայ իւր  
հայրենական և ծննդական երկրի հա-  
մար, և մի համակրութիւն իւր աղ-  
ջակցաց և հայրենակցաց համար: Բայց  
զգայուն և կիրթ սրտերու մէջ այս  
ձգտումն ու համակրութիւնը սրբ-  
բուան զտուած են և նուիրականութե-  
հասած: Հայրենասիրութեան հուրը  
մարտը հոգնեցու մէջ սրբազան հուր  
է և ազնիւ հուր, որոյ արտաքին երե-  
ւոյթները մեզ յայտնի են, բայց ներ-  
քին ջերմութիւնը, այն սքանչելի ե-  
լիքարականութիւնը, որոյ հաղորդակ-  
ցութիւնը սրտի և արեան մէջ է,  
մեզ համար խանձկնելի է: Օտարա-  
ցիւր օտարութեան մէջ, մեծացիր փա-  
թամութեան մէջ, հեռի հայրենիքէ,  
հեռի հայրենակիցներէ, բայց ունեցիր  
սիրտ, ունեցիր կրթութիւն, և մի օր  
անշուշտ սիրադ պիտի թռթռայ, աչ-  
քեդք պիտի սլուորին արտասուներով,  
և հոգեդ պիտի մնէ զքեզ հայրենիք  
օրոնել, ազգակիցներ խնդրել, ճոխ  
ապարանքներ խուսափել և զեղարք  
չընել: «Անկաւ ի սիրտ նորա, կ'ասէ  
Ս. Գրքը: Սովսիս համար, չընլ զեզ  
բարբք զորդւովքն խարայէլի: Թողաւ  
Սովսէս Փարաւոնի արքայական պա-  
լատը, թագաւորական գերդաստանի  
որդեգրութիւնը և ցանկացաւ իւր  
բեռնակիր եղբարց հիւղերուն այցե-  
լութիւն առնել, նոցա մէջ չընլ, նո-  
ցա հետ ապրիլ և նոցա հետ մեռնիլ.  
կամիք ասել, ջերմ սիրով սկսաւ սիրել  
իւր արեւակիցները: Ասան զի, սիրել  
կը նշանակէ ապրիլ, միայն անձը սիրել  
կը նշանակէ անձի համար ապրիլ. մի-

այն ընտանիք սիրել կը նշանակէ ըն-  
տանեաց համար ապրիլ, և աղք սիրել  
կը նշանակէ աղքի համար ապրիլ: Աղ-  
գի սիրտը կը բաբախի ազգասիրի սրտի  
վայ, և իւր սիրտը ազգի սրտի վայ:  
Ազգասէրը կը շնէ այն շունչը, ինչ  
որ կը շնէն հայրենակիցքը. վասն զի  
մի աներեւոյթ շունչ կայ, որ մէկէն  
կ'անցնի միւսին: Այս սիրային առերեւ-  
առութեան մէջ, այս համակցու-  
թեան մէջ հայրենասէրը անձնաւա-  
րութիւն չունի, նորա ցաւը և միւր  
թարութիւնը ազգի մէջ է: Այս աղ-  
գի հետ կը հիւանդանայ, ազգի հետ  
կը տառապի, և ազգի հետ կը միմիջա-  
բի: Այս արտի խորոց մէջ ձայն մի  
կայ, որ միշտ կ'աղաղակէ. «Ա՛հ, ի  
ձենջ հիւանդանայ և ես ոչ հիւանդա-  
նամ: Այս սեպհականութիւն չունի,  
վասն զի նորա սիրտը, բազուկները  
սքնութիւնը, վաստակը, հարստու-  
թիւնը, կեանքը և աղօթքը, բոլորը ազ-  
գի համար են: Այս միմէ այս միայն:  
Այ, ոչ, ազգի ցաւն զգալ, ազգի հետ  
վշտանալ և ազգի հետ ուրախանալ,  
այս հայրենասիրութեան զիւրին աս-  
պարէզն է: Այս աւելի գերազայնը,  
սուելի սքանչելին, աւելի ծանրն և փա-  
փաքելին, այսինքն ազգի դառնու-  
թեան բաժակը խմել, որ ազգի քիմ  
քը քաղցրանայ. ազգի յանցանքը ու  
պաշտարել և նորա մեղաց համար մեռ-  
նիլ, որ ազգը ներողութեան արժա-  
նանայ, ազգի համար ջնջուիլ յերկրէ  
և երկնքէ, որ ազգը երկիր և երկնք  
ունենայ. ազգի համար նոյով ընիլ,  
որ ազգը օրհնութեան արժանանայ:  
Այս սեղ է ահա հայրենասիրութեան  
նուիրական կատարը, այս տեղ է հա-  
րենասիրի ուխտը, և այս էր օր պայ-  
ման կը դնէր Սովսէս և կը պաղատէր  
«Այլաւմ գբեզ, Տէր, եթէ թողու-  
զնդս ժողովդեան, թող ապտ թի

ու՛ ջնջեալս զիս ի գալիսութենէ քուսմէ,  
 յոր գրեցեր ո՛ր (Եւ. ԼԲ. 22.) Լ՛յս  
 ցաւով և հեծութեամբ կ'աւազէր Պա-  
 զոս, «Աւազէր ինդրէի նշով լինիլ  
 ի Քրիստոսէ վասն ազգականաց իմաց և  
 եղբարցոյ Լ՛յսպէս կը փափաքէր և Նրե-  
 միաս, որ իւր գլուխը ծով դառնայ և  
 աչքերը արտասուաց աղբիւր՝ իւր ազ-  
 գի փախաբէն լսուր, «Ս' ասոր զգը-  
 լուիս իմ ջուր, և զաչս իմ յաղբիւրս  
 արտասուաց, զի նստէի և լայի զմզմ  
 ժողովրդեան իմոյ ո՛ր Լ՛յս է հայրենա-  
 սէրներու ուխտը, այսպէս ուխտած  
 են հին և նոր Եւթոփ անձման պատ-  
 քաճախասները, Լ՛յս լեզուով խօսած  
 են մարդկային ազգի պատմագրու-  
 թեան մէջ եղած բոլոր ճշմարիտ ժո-  
 ղովորածներն իւր, աղգասէրները և  
 մարգասէրները, Չափազանց սիրող-  
 ները չափազանց վեպեր կրած են, ու  
 մանք նշովուած ու մառնուած են, ու  
 մանք տանջուած և չարչարուած են, և  
 շատերը իրենց կեանքը ուրիշներու  
 կենաց համար զոհած են: Արքայ անի-  
 ճից և նախատանայ խաչի վրայ բարձ-  
 րացուց այն երկնային Սարգաւելը,  
 որոյ սիրտը բոլոր մարգկութեան սրը-  
 տի վրայ էր, և բովանդակ մարդկու-  
 թեան սիրտը՝ իւր սրտին վրայ, այն  
 սրտին վրայ, որով հիւանդ ապեւրը  
 կ'ողեւորին և կը կենդանանան և ճշն-  
 շեալ ժողովուրդները կ'ազատին և կը  
 զօրանան: Նրանի ժողովրդին, որ չը-  
 հեռանար այս փրկարար սրտէն: Լ՛յս  
 անբուժելի թշուառութիւն չունե-  
 նար երբէք, և ոչ մշանջեալս գե-  
 րութիւն: Արքայ դատապարտեց ան-  
 նման հայրենասեր Սովետը չքմանել  
 Լ՛եւտեաց երկիրը, «Հանգիման տես-  
 ցես զերկիրն, և անգր մի մտանիցես ո՛ր  
 Արքայ դատապարտեց Պողոսը իւր հայ-  
 րենի յուսոյ համար ծանր շղթաներ  
 կրել. «Ս' ասն յուսոյն խորայնի կամ

ի շղթայս ո՛ր (Գործ. ԻԷ. 20): Արքայ  
 ճանչորհիլն և սուրբն Գրիգոր խոր-  
 խորաւոր իջաւ, և Տրդատ ու Ներսէս  
 դառնութեան թիւնայլց բաժակը  
 քամեցին, իսկ սուրբ Սարգանաք և  
 Իւստինիանք իրենց անձը զոհե-  
 ցին, վասն զի ճշմարիտ սէրը առանց  
 զոհի չէ: Երգարեւ հայրենասիրու-  
 թիւնը այնչափ բնական է, որ մենք  
 հեթանոսական դարուց օրինակներ  
 եւս կարող ենք յառաջ բերել, ինչ-  
 պէս են Կողորմ (Ա), Դեցիլու (Ա) և  
 Եւթոփ, բայց ըզձալն է մեզ մանա-  
 լանդ այն հայրենասիրութիւնը, որոյ  
 երկրաւոր մասունքները զոտւած են  
 երկնային սիրով, որոյ առարկան է  
 մանաւանդ ազգի բարոյական կենդա-  
 նութիւնը, կատարելութիւնը և լու-  
 սաւորութիւնը, և որոյ հիմնաքարն է  
 Քրիստոնէութեան ազատարար եւ  
 անյաղթ ոգին: Լ՛յս տեսակ հայրե-  
 նասիրութիւնն է որ կը խորտակէ ժո-  
 ղովորեան շղթաները և հայրենիքը  
 կաղատէ ապականութենէ: Թող հա-  
 մայրմբին ընտանիքներ, թող գումա-  
 րին ժողովուրդներ, և թող շինուին  
 քաղաքներ, այս ամենը մեղուի և մըր-  
 ջունի աշխատանք է: Եւթոփ թող իրա-

(1) Արքայ վերջին թաղարար Աթենացոյ: Սա  
 թաղարարելով 1160—1162 թուականին նախ քան  
 զՔրիստոս, երբ Աթենացիք և Դորիսացիք խորա-  
 գե՛մ կը պատերազմէին, պատգամախօսէն լսեց որ  
 այն կողմ յաղթող պիտի գտնուի, որոյ թաղաւորը  
 զոհուի: Ազատութեանը զոհեց սա իւր անձը իւր  
 ազգի համար և Աթենացիք յաղթող հանգիստանա-  
 նա թիւնը, որ Աթենացիք արժան չը համարեցին ուրիշ  
 մէկը նորոս տեղ թաղաւոր գծել, և այսպէս վերջ-  
 ցուցին իրենց թաղաւորութիւնը:

(2) Դեթատ—Մոսէ եր հիւպատոս Զուովմայեցոյ  
 (315 տարի Քրիստոսէն առաջ) որ ազատեց Կու-  
 նելիոս Կարոյ Վանիսացոյց պատերազմին մէջ, իսկ  
 երկու տարին յետոյ Լատիսացոյց գե՛մ ունեցած  
 պատերազմին մէջ իւր անձը զոհեց որ յաղթութիւն  
 պարգեւէ Զուովմայեցոյ: Անվհեր վաղեց գեղով  
 թշնամեաց բանակը և սպանուեցաւ, որով և Զե-  
 ուովմայեցիք յաղթող գտան:

առնելը հաստատուելի, արգարութիւնը  
թագաւորէ, լուսաւորութիւնը ծա-  
ռալի. — ահա մարդու աշխատանք, ա-  
հա ձգմարիտ հայրենասիրի բաղձանք :  
Վասնզե, այս վեհամական գաղափարը կը  
ծնանի մարդկութեան համար՝ Պղա-  
սան, Սկրատ, Վալիլէ և Վեփսն,  
իսկ վայրենութիւնը և արտապետու-  
թեան ահռելի կիրքը կը ծնանի Չին-  
գիսիսաններ և Վենիթեմուրներ : Վա-  
պրն զի, ինչպէս կատարեալ մարդը՝ նոյն-  
պէս և կատարեալ հայրենասէրը լու-  
սաւորութեան քաղաթիւն պէտք է որ  
երեւին :

Ղեմարիտ հայրենասէրները և ժողո-  
վորդասէրները իրենց ազատութիւնը  
մատնած են և կեանքը զոհած, որ  
պէս զի ազգը և ժողովուրդը կեանք և  
սնունդ ունենայ արգարութեամբ և  
ազատութեամբ, վասն զի, արգարու-  
թիւնը ժողովրդի հոռնձն է և հայր-  
իսկ ազատութիւնը՝ նորա հարստու-  
թիւնը, հանգստութիւնը և փառքը :  
Վասն զի, կեանքն ուտել խմել չէ, այլ  
բանական կատարելութիւնը, առանց  
որոյ չկայ մարդկութիւն, չըկայ և ազ-  
գութիւն : Վեթ կեանքը զոհելը դիւ-  
րին է ազգասիրի համար, կարծիք չը-  
կայ որ իւր գոյքը զոհելը ազգի օգտի  
համար՝ եւս ուտաւել դիւրին է :

Հայրենասէրները շատ անգամ ա-  
պերախտութե հանդիպած են իրենց  
սիրած ազգի կողմէն և կը հանդիպին.  
բայց ոչ ապերախտութեան վրէժխն-  
դիր են ; ոչ արտունջներէ կը փռանան  
և ոչ բանտէ և կախարանէ կը դարհու-  
րին : Սովսէս կենաց գարտութենէն  
կը խնդրէ ջնջուիլ այն ժողովրդի հա-  
մար, որ անթիւ ապերախտութիւն  
ներ և թշնամանքներ յարցոյն րա գէմ,  
նախատեց, յանդիմանեց և դառնա-  
ցոյց : Պօղոս կը խնդրէ նըով լինիլ  
այն ազգի որդւոյ համար, « Որք նը

զովք նզովեցին զանձինս, ոչ աւտել  
և ոչ ըմպել, մինչև սպանցեն զՊօղոս »  
(Գործ. ԻԳ. 14) : Հատ հայրենասէր-  
ներ գերեզման անգամ՝ չունին այն  
հայրենեաց մէջ, զոր կը սիրեն և որոյ  
համար իրենց անձը կը զոհեն. « Վա-  
ռն ոչ որ գիտաց զգերեզման նորա (Սով-  
սիսի) մինչեւ ցայսօր » (Օրին. ԼԴ) :  
Հասերու անունն անգամ բերել ջա-  
նացած են այն ազգի մէջէն, որոյ սե-  
րոյ համար խնդրած են նզով լինիլ.  
« Վարձ ի մէնջ, բարձ ի մէնջ, բարձ  
զգա » (Գործ. ԻԱ. 36) : Ժողովուրդը  
շատ անգամ մղած, մերժած և հեռա-  
ցուցած է այն աննման հոգիները, որոնք  
անբաւ կապով կապուած են եղեր ժո-  
ղովրդի հետ, և չէ կամեցեր նուիրա-  
կան հայրենիքէն մի բուռն հող ան-  
գամ տալ նոցա՝ թաղուելու համար :

Հայրենասէրները հայրենիքը սիրեր  
են նոյն իսկ հայրենակցոց համար, և  
ազգը սիրեր են նոյն իսկ ազգի հա-  
մար, իսկ իրենց բաժինն եղեր է նը-  
զովք և ապերախտութիւն, զոր, ա-  
ռանց նեղանալու, սիրով խնդրեր և  
ընդունէր են : Վասն է ահա ոչ միայն  
ժողովրդասէրներու և ազգասէրներու  
վարձը, այլ և մարդկային ազգի ամեն  
նշանաւոր բարերարներու : Սինչև որ  
նոքա չեն նզովուեր և չեն զոհուեր  
բանտի մէջ, պատերազմի մէջ, կախա-  
ղանի վրայ, խարուկի վրայ, նոցա սէրը  
իւր լուծեանը չէ հասեր : Վասն զի  
նոքա այն նուիրական շիշն են, որոնք  
մինչև չը բեկուեր, բովանդակ անու-  
շահաստութիւնը չը ծաւալիր ժողովրդ-  
դի վրայ, ազգի վրայ և մարդկութեան  
վրայ : Վարդկութիւնը շատ անգամ  
արձաններ կը կանգնէ այն անձանց  
համար, որոնք ժողովուրդը կը մոռ-  
թեն, և ընդհակառակն՝ կախաղան կը  
պատրաստէ այն անձանց՝ համար, ու  
րոնք ժողովուրդի սիրով կը տալորին : Հատ

ուշ միայն ժողովուրդը կըզգայ և կ'աբա  
տասուէ իւր խելական բարերարներու  
համար ։ և այս է ժողովրդասէրներու  
կամ ազգասէրներու անեղծ փառքը և  
անմահ յայլթանակը ։ Սակայն , պիտի  
խոստովանինք որ ապերախսութիւնը  
ամեն ժամանակ ուղղակի ժողովրդէն  
չը բղկնէր ազգասէրներու դէմ , այլ  
տեսակ մի անձնապաշտ , չարակամ և  
փայրենամիտ անձերէ , որոնք երբեմն  
իբրեւ ժամատխոս կը վարակեն ժողո  
վրդի սիրտը , միտքը եւ իր բարե  
բարներու դէմ կը գրգռեն ։ Այս ան  
տակ անձինքը միութեան բաժանարար  
նէր են ։ Վասն զի մարդը միացած է  
ընտանեաց հետ , ազգի հետ և մարդ  
կութեան հետ ։ Վիճակութեան մէջ է  
ամբուլթիւնը , զոր գերութեան և ըս  
տիկութեան երկաթները կարող չեն  
խորտակել ։ միաբանութեան մէջ է  
նայնպէս փոխադարձ օժանդակութիւ  
նը և կենսութեան Հետեւապէս միացածը  
բաժանել կը նշանակէ սատանայի գործ  
գործել իսկ միացածը հալածել , հա  
րջատահարել և մահացնել , ինչ անուն  
կարէ ունենալ այս սարսափելի գործու  
թութիւնը ։ Սակայն , զգայուն որտեքը  
հեծութեամբ կը տեսնեն շատ անպամ ,  
որ եղբայր եղբոր , ազգ ազգի շղթա  
ներ , դարբնած ունի , կը տեսնեն փո  
խանակ օգնականութեան՝ որբայիլոծ  
հարստահարութիւն , և փոխանակ Քը  
րիստոսի քաղցը և մարգասէր պատկե  
քին կ'այէնի ուրուականը ։

Իսկ երբ այս չարեաց աղբիւրը կը  
հետապնեն , կը նշմարեն ակներեւ , որ  
այս ամենը սգիտութենէ եւ անկրթ  
թութենէ յառաջացած են և մարդաց  
ու ազգաց փոխադարձ պարտուց ան  
կատարութենէն ։ Վասն զի , ամեն ան  
հաս պարտք ունի իւր արդիւն օգնե  
լու , և իւրաքանչիւր ազգ պարտք ու  
նի մարդկութեան օգնելու ։

Որովհետեւ , ինչպէս անհատները  
ազգութեան սնդամ են , նոյնպէս և  
իւրաքանչիւր ազգ սնդամ է հանուր  
մարդկութեան ։ Ինչպէս ամեն անհատ  
պարտական է իւր ազգի իրաւունքը  
և արդարութիւնը պաշտպանել , նոյն  
պէս ամեն ազգ պարտական է ազգաց  
իրաւունքը վերականգնել , եթէ յա  
փշտակուած են ։ Վասն զի , իրաւունք  
պաշտպանել կը նշանակէ հանուր  
մարդկութեան բարերարելը ։ Վերա  
տես Վարդանի մէջ , Հոնիգրաս թեր  
մոփիլէի , Թեմիստոկլէս , Սալամինի և  
Վարդան Հաւարձանի մէջ , հայրենի ի  
րաւանց համար պատերազմելով կը  
պատերազմէին մարդկային ազգի ու  
պագայի համար ։ Այս ազգը , որ ուն  
տարբերութեամբ կը նայի իր գրացի  
ազգի ճիշմանը և հարստահարութե  
նը վրայ , նա ինքը իր համար փոս կը փորէ  
ուր անպատշաճ օր մի պիտի թաղուի  
Իսկ այն ազգը , որ ինքը արդէն իւր  
օգտի համար անտարբեր է , նա մի փր  
տած մորմին է մարդկութեան մէջ ,  
որ աւելի լաւ է չորս կողմը պատ քա  
շել , քան թէ թաղուէ որ իւր հոտը  
տարածուի և ուրիշները ևս մահացնէ ։  
Թէ ինչու մեր նիւթէն հեռանալով  
այս ազգաց համեմատութիւնները յա  
ռաջ կը բերենք , անպահով եմք , որ մի  
տողիւր ընթերցողները կը հասկանան  
մեր նպատակը ։ Սեր նպատակը ոյն  
քան տրամաբանել չէ , որքան ջերմու  
ցնել վասն զի մեր առարկան Վէրն է ,  
որ ջերմութեամբ զգալի կը լինի , քան  
թէ տրամաբանութեամբ ։ Ազգաց  
պարտուց և վիճակի վրայ խօսելով  
կամիմք ցոյց տալ հայրենասիրի զգաց  
ման ամենավերին կէտը , և պատկերա  
ցնել թէ ինչ ծանր վիճակութեան  
տակ է նորա փափուկ սիրտը , երբ սըր  
տին համապատասխան չէ իւր հայրե  
նեաց և հայրենակցաց վիճակը ։

« Այն հայրենասէր սիրտը, այն ազգասէր թափանցիկ աչքը, որ կը դգայեւ կը տեսնէ թէ իւր ազգը ոչ միայն ընդհանուր մարդկութեան օգնելու կարողութիւն չունի, այլ և իրօքին անդամ անասորքեր է, և ազգաց մէջ խեղաթիւր անդամալոյծ մի համարուած է: Այն սիրտը, որ գրկած ունի իւր հայրենիքը, իւր բոլոր ազգը և նորա վիշտն ու տառապանքը, այն սրտի նման ծանր բան չըկայ աշխարհիս վրայ: Այս ոչ իշխանական խղճախճանութեամբ մէջ թրախուլութիւն ունի, և ոչ թափառարական հանդիսից ժամանակ բերկրանք: « Բնդէր՝ արուած և տխուր են երեսք քո, և հարցնէ Արաշէս Պարոնի թագաւորը իւր տակաւարեւոյն Նեմի խորոյնցայն: — « Սխմիդ ոչ արուած և տխուր լիցին երեսք իմ, կը պատու իմանէ Նեմի, վասն զի քաղաքն եւ տուն հօր իմց անասպատէ և դրունքն ազականեալ ի հրոյդ: Ի՞նչ է արեմն բողձանքդ, վերապին կը հարցնէ թագաւորն: Նեմիի սիրտը կը բարախի, միտքը կը յուզի, կը գողգողայ սաստիկ այլալոյսութենէն, և կը ինգրէ իւր հայրենիքը դառնալ, որ թէպէտ աւերուած ու այրուած էր, բայց քաղաք էր իր համար: Կը որաղատէ Նեմի: « Տէր, եթէ եգիտ ծառայ քո շնորհաս առաջի երեսաց քոյ և կամիս՝ յըզեա զիս ի Հրէաստան, ի քաղաքս յիշատակարանաց հայրն իմցդ, և երբ կը կատարուի խնդիրը, կարծես թէ ծանր տրտմութեան ճովեցուցիւ ապառաժ վէմը կը յնդի կուրծքի վրայէն իբրեւ ամենաթեթեւ գտրոյն: »

Այն հայրենասէրը, որ կը տեսնէ իւր հայրենիքը աւերակ, քաղաքները հիմնայատակ, նուիրտիան տաճարները փլեւալ, նախահարց գերեզմանները կոխան օտարաց, և յիշատակարաններ

որ ու փառքը եղծուած, միթէ չաղաքակէր խորին թախմութեամբ, ինչպէս Նեմի: « Սխմիդ ոչ արուած և տխուր լիցին երեսք իմ, վասն զի քաղաքն և տուն հօր իմց անասպատէ, և դրունքն ազականեալ ի հրոյդ: »

Այն սրտացած ազգասէրը, որ լցած և բարոյականութիւն կը քարոզէ և աւերտեսաց երկիր տա ազատութիւն կ'աղաղակէ, և կը տեսնէ որ իւր ժողովուրդը գարձեալ գերութիւն ու Վախատու կը սիրէ և բռնակրութեան տխուր լի կը փախալի, ջանկարով ձի և ջորէ լինել: քան թէ մարդ, այն առաջնապեալ ազգասէրը ինչպէս չը կրկնէր, « Տէր, եթէ թողուս զմեզ ժողովուրդ գեան իմց, թող, ապա թէ ոչ ջնջեալիս ի գաղութենէ կենացդ: »

Այն ազգասէրը, որ կը տեսնէ իւր եղբարքը և ազգականքը մոլորուած ոչ խորնելու նման ցրուած, անտուն անօգնական, ընտանեկան և հայրենական միութարութենէ զրկուած, մոխիրը իրենց համար հայ գարձած, և իրենց բնակին քրտամբք և տրտաւոր խառնուած, յերկրէ երկիր թափառական, իրենց անունը և յիշատակը մոռցած, այն վշտալարաբա ազգասէրը ինչպէս չուրտէր, « Ախարբ խնդրէի նզով լինիլ ի Բրիտանի վասն ազգականաց իմց և եղբարց: »

Այն ժողովուրդասէր, որ կը տեսնէ թէ իւր ժողովուրդը գտնէ այնչափ չը սիրէր իրաւունքը, արդարութիւնը և ազատութիւնը, որչափ մեղկը կը սիրէ հաւնքը, արուեստաւորը, օրական հացը, վաճառականը՝ հարտուութիւնը, նաւաստին հանգստութիւնը և զինուորը՝ փառքը, որ գտնէ նիւթահանի չափ չը մտածէր իւր բարոյական արժանաւորութեան վրայ: այլ տեսակ մի անասնական ու բռնական կեանք կը վարէ, կը հարկանեն չըգտար, կը

չարժեն՝ չը շարժիր, աչք ունի՝ չը տեսնէր, և ականջ ունի չը լսէր, քիչ կուրող է ուխտել այս ամենը տեսնող և զգացող ժողովուրդասէրը, եթէ ոչ իւր գոյքը և կեանքը զոհել, միայն թէ իւր ժողովուրդը զարթնու, կենդանանայ և իրեն ամրոց ապրի մարդկութեան մէջ:

Այն ազգասէրը, որ կը տեսնէ իւր ազգային մարմինը տկար և գանձաթանկ վէրքերը հագած որպէս զգեստ, կենդանաբար փայլը աչքերէն շլճած եւ ծռակները կթուցեալ, միթէ չհարցընէր. — արդեօք այս իմ մարմինն է և պատկերը, արդեօք այս վէրքերն փութաթող ձեռք չը կայ. արդեօք այս շլճած տեսութեանը ըյտ տուող չը կայ. արդեօք միշտ ծարաւ ժամանակ կը լսուի և քայքայի պիտի արբուցանեն: Այ, եթէ այսպէս է, կ'ուխտեմ նոյն վուխ, կ'ուխտեմ զհաւիտ, և թող ապրի այս առաւայետը:


Այն ազգասէրը, որ կը տեսնէ ամէնօր հազարաւոր քրոնթաթոր բեռնակիրներ, որոց կեանքը ստուերի նման կ'անցնի, կը տեսնէ հարիւրաւոր բնաւորներ, որոնք առաւայանայ մէջ կը հեծեն և կը մաշին. կը տեսնէ հազարաւոր մանուկներ, անպատասպարան անուամուկներ, որոնք թշուառութեան մէջ կ'անձին, թշուառութեան մէջ կը թաւաւան, ծառայ կը ծնանին, ծառայ կը մեռանին. երբ իւր միլիոնաւոր ազգակցաց այս տխուր պատկերը կը տեսնէ և կը զննէ, քիչպէս կարէ չը մղկտալ և չը զաղակել. «Այն ապաքեն մարմինք եղբարց մերոց մարմինք մեր են, և որդիք նոցա՝ որդիք մեր. և արդ՝ ընդէր տուաք զորդիս մեր ՚ի ծառայութիւն, և դստերք մեր վարեալ են ՚ի բռնութիւն»: (Եւթ. Ե, 5):

Այն հայրենասէրը, երբ կը տեսնէ մանուսանդ, որ թէ գոտարներէն,

և Թէ՛ իր ազգակիցներու մէջ կան մարդիկ՝ որոնք ժողովուրդի տառապանաց ժամանակ հանգիստ են, որոնք ժողովուրդի սղաւառ ժամանակ իւրենք կը ծիծաղին, որոնք փոխանակ ժողովուրդը տառապանաց սղճէն հանելու՝ աւելի կը խորատուզեն, որոնք ազգի վերաւոր դասները կը գիշեն, և այն բարձրութեան վրայ իրենց աթոռը կը գնին, այն հայրենասէրը, որ կը գիտէ թէ այն օրինակ որդուք կան, որոնք ազգային վերաւոր մարմինը կը կրծեն և արիւնը կը ծծեն, որոց աչքը արտասուք չունի և սիրտը պողպատ է, որոնք իրենց անձին կը զոհեն հազարաւոր եղբայրներ, ճշմարիտ կ'ասեմ, որ այս ազգասպանութեան ահաւել տեսարանը նկատող ազգասէրը կենդանի զոհ մի է, որ համապարկ կը տուչորի և կը ճենձերի արտով, մոռա՞նք թեմաք և անպատուութեան թեմաք:

Այսպէս ահա, երբ քիտոր, արտասուքը, մերկութիւնը, ստրկութիւնը և տգիտութիւնը բաժին են հայրենակցաց, հայրենասիրի բաժինն է նոյովք, նորա ուխտն է նոյովք, անձին իւր եղբարց իրաւանց, բարօրութեան և կենդանութեան համար: Այս է ազգասէրներու ուխտը, և այսպէս՝ ազգի սէրը կը վառէ և կը սպառէ նոցա կեանքը, ինչպէս այն նուիրական հուրը, որ ի հնումն կ'այրէր զոհը և ողջակէզը: Այս ուխտն էր մեր բլնաբանը, այս թող լինի և մեր նշանաբանը. «Աւխտեք խնդրէի ես իսկ ինքնին նոյով լինիլ ՚ի Քրիստոսէ վտան եղբարց իմոց և ազգականաց ըստ մարմնոց»:

Գ. Մարապետան:



Որչափ որհնակ է արգար մարդը . և դու ո՞վ Տէր , դու ես տնոր Աստուածը , դու ես անոր ամենամեծ պարծանքը : Ո՛հ , երանք թէ արգար ըլլալով՝ միշտ Աստուծոյ ներկայութիւնը վնասէի , այն առանձին պիտի զգայի , որ երկիւղած հոգիս ի կատարելութիւն կը դիմէ :

Հայարտութեան և սնայարծու թեան ներքեւ ծածկուած պաշկատութիւններս թող ներկայանան իտեղարկու աշտոյ առջեւ , եւ մերկայարանոց երեսին ինձ ամեն պարզունքներս և մեղքերս :

Ի՛նչ կայ աւելի օգտակար մարդուս համար ուսանելու , բայց եթէ իւր անձը ճանաչելը , այլ աւանդ , որ խիստ քիչ կը գտնուի իւր տկար ըլլալը խոստովանող :

Դու միայն , ո՞վ Աստուած , դու միայն կարող ես հոգեոյս խոր թափանցել , վասն զի բարի ըլլալու համար անտական է քու գորութիւնդ : Ո՛հ , ընդունէ զիս , նորոգէ սիրտս , բարձրէ ինձ այն եղջը , որ բարբոթին սուրբ ըլլամ , և զիս վերջապէս ազատ պիտի ամեն քողտկի սրտի սլմանքէ :



Իբրեւ ի թէ անձամբ բաւական եմք ի որհնել ինչ իբրեւ . ի մենք , այլ բաւականութիւն մեր Աստուծոյ է :  
( Բ . Վերջապէս . Գ . 3 : )

Մարդուս հոգին կը նմանի այն լուսոյն , որ բայց ի իրմէ՝ ամեն բան կը լուստուորէ . վասն զի երբ հոգին կատարեալ ճանաչողութեան կը հասնի , անոր գիտակցութիւնները կրնան մերձաւոր առարկաներէն մինչեւ ամենահեռուս որ աստղերը տարածուիլ , և ինքն մինչեւ մթնոլորտէն մէջ , յորում և ոչ մէկ աչքի տեսութիւն կրնայ թափանցել : Մեր գգայարանոց միջոցաւ հոգինիս ծանօթութիւն կ'ըստանայ ձեւի և գոյնի , ներդաշնակ կամ աններդաշնակ ձայներու , և բոլոր աչխարհիս մէջ գտնուած , արտաքին առարկաներու վրայ . բայց ինչ որ իրեն կը վերաբերի , զայն միայն ներքին համոզմամբ եւ իւր անկէն ճանաչողութեամբը կրնայ ուսանիլ :

Միտքը երկրիս վրայ բազմաթիւ առարկութիւններ կը լուծէ , բայց այն որ իրեն ամենամերձ է , այն որ իւր սեպհական գոյութեան խորհուրդն է , չկրնար զննել , ինքնաձանաչողութեան այս տարօրինակ դժուարութիւնը նոյն

իսկ մեր մարմնոյն վրայ ալ կը տեսնուի , վասն զի շատ անգամ ուրիշ ամեն բան , աւելի որոշ կը տեսնանք , բայց մեր անձը դիտել անգամ կարող չենք : Վաւերի վի մեր մարմնոյ մէջ այնպիսի մասնուներ կան , զորոնք տեսնարու անկարող ենք . բայց զանոնք որ բացակայ են , առանց դժուարութեան մեր միտք մէջ կը պատկերացնենք , ինչպէս են զանազան անձանց կենդանագիրք , որոնց հետ շատ կամ քիչ ընտանութիւն ըրած ենք . այսու ամենայնիւ մեր իսկական պատկերը թէպէտ եւ շատ անգամ հայելիին մէջ տեսած ենք , դարձեալ չենք կրնար մեր մտայ առջեւ ներկայացնել . և եթէ ներկայացնել ազնիւք , միշտ անստոյգ և աւորոշ կը մնայ մեր յիշողութեան մէջ : Եւ այս տարօրինակ իրողութիւնը անշուշտ շատերուն զգալի ըլլալով , այս հարցումը ընելու պիտի ստիպուին թէ « Ի՞նչու այնչափ իրերու վրայ ծանօթութիւն ունիմ , և իմ անձիս ճանաչողութեան մէջ թերի կը գտնուիմ » :

Եւս բանը՝ որ հիմնովին գիտենք

\* Թարգ . ի Գաղղիական :

ու կը ճանաչենք, սովորաբար զայն զըն-  
նէրու կարօտութիւն չըմբար, որովհե-  
